

931

Unterpricht
Gymnasium

44
S-36

Gymnasium 6 S
1893

2010

2002

5-36

ՏԵՍՐԱԿ

(34)

ԳՈՎԱՍԱՆԱՑ

Ի ՎԵՐԱՅ ՀԱՄՈՐՔՆ ՏՆՈՐԻՆԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՑ

ՈՐՔ ԵՆ ՅԱՍՏՈՒԱԾԱՀՐԱՇ ՔԱՂԱՔՆ

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ի ԽՆԴՐՈՅ ՏԵՐՈՒԻՆԱԿԱՆ ԵՒ ԶԵՐՄԵՌԱՆԴ

ՈՒԽՏԱԴՐԱՑ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆԱՑ

ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

1893

Կցեսցի լեզու իմ 'ի քիմս իմ , քէ ո'չ լիշեցից զքեզ ,
քէ ո'չ նախ նուագեցից զքեզ , Երուսաղեմ , սկիզբն ու-
րախութեան իմոյ . Սաղմ . ձԼԶ . 6 :

52971-սԴ



38701 - 67

ՏԱՂ ԳՈՎԱՍԱՆԱՑ


Ի ՎԵՐԱՅ ՍՐԲՈՅ ՔԱՂԱՔԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ի ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ՈՒԽՏԱՓԱՓԱՔ ՀԱԽԱՏԱՅԵԼՈՅ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

ՊԵՏԱԿ քաղաք ծովուն մօտիկ ,
Երուսաղէմ խիստ գեղեցիկ
Անմահութեան բուրէ հոտիկ .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
Երուսաղէմ է ծաղկեալ դաշտ ,
Յորում բնակին շատ խաչապաշտք .
Տէր մեր Քրիստոս ընդ մեզ է հաշտ .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
Երուսաղէմ է սուրբ քաղաք ,
Յամէն օր գոյ անդ Պատարագ ,
Որոյ շընորհն է մըշտածագ .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
Երուսաղէմ յոյժ փառաւոր ,
Յուխս եկողաց գանձ հոգեւոր ,
Մահտեսութեան անուն տայ նոր .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:



Երուսաղէմ վեց դուռ ունի ,
 Մըտանողաց մեծ շնորհ ունի ,
 Զի քաղաք Տեառլն անուանի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Սուրբ Փրկիչն է բանտ Քրիստոսի ,
 Հրեշտակապետն ՚ի նոյն կարգի .
 Սուրբ Յակովը է վանք պանձալի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Յորդանան գետ մըկըրտութեան ,
 Սուրբ Վերնատունն հազորդ ութեան ,
 Սուրբ Գողդոթայն խաչելութեան .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Սուրբ Յարութիւն է բարձրաշէն ,
 Յօրինուածն է գեղեցկօրէն ,
 Բաղձան դիմել աշխարհ ամեն .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Սուրբ Յակովը է բարձր շինած ,
 Աւագ խօրանն ոսկեջըրած ,
 Պօղոս Պետրոս վըրան գրած ,
 Սուրբ Գլխադիրն յինքն է թաղած :
 Գլխադիրն դուռն յօրժամ բանան ,
 Անդ մերձակայք փըզձկին եւ լան ,
 Հոգեւով ցնծան ուրախանան .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Ծունքը եղեալ զայն համբուրեն ,
 Եւ խնդրուածք բազում առնեն ,
 Յորդ արտասուօք զոգիս մաքրեն .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Յակովըն է զարմանալի ,
 Արեգական նըման փայլի ,
 Պարգեւ տուեալ Հայոց ազգի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Սուրբ Յակովըն է բազմասեղան ,
 Վարդապետաց հանդիսարան ,
 Քըսան եւ հինգ ունի խորան .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Սուրբ Վերնատունն երբ ոք հայի
 Սուրբ Նշանէն անդ զարհուրի ,
 Յանոյշ հոտոյն յոյժ ըզմայլի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Սուրբ Յակովըն է գանձ բարելի ,
 Բոլորն ամեն Եկեղեցի ,
 Ուխտաւորաց Ուխտատեղի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Էջմիածինն յետոյ շինած ,
 Սուրբ Ամիսա նոր խօրան օծած
 Ի վերայ սուրբ երից վիմաց .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
 Յորոգ շինեալ կանանց տեղի .
 Որ Վերնատուն անուամբ կոչի .
 Երկու խօրանք կան յայն վայրի ,
 Ուր Պատարագ մատուցանի .
 Յընթեաց խօրանն ՚ի հինգ շաբթի՝
 Յաւագ աւուրս սուրբ շաբթի՝
 Եւ ՚ի միւսում սուրբ խօրանի
 Ի սուրբ տօնին Վարդավառի :

՚ սէր քո սուրբ օրհնեալ Գրլիսին
 Երկու արքայք սիրով վառին ,
 Մեծըն Տըրդատ եւ կոստանդին
 Սուրբ հաւատով առ քեզ եկին :
Քրիստոս Աստուած Տէրն ամենին
 Ողորմելով գործոյս ձեռին ,
 Լըսել տացէ ինձ ծառային՝
 Ե՛կ օրհնեալ ձայնն Աստուածային :
Որ մեղաւոր եմ հողածին ,
 Դու ես իմ յոյս , Աստուածածին ,
 Բարեխօսեա առ Միածին
 Յիսուս որդիու յաւուր մեծին .
 ——————

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Ասացեալ բարանաբար ՚ ի վերայ փրկազործ
 Զարչարանաց տեղեացն Քրիստոսի :

Ի սուրբ երկիրն այն Աւետեաց
 Ժաման հասեալ Աւխտաւորաց ,
 Հարցաք ըզնա ուրախազգեաց
 Ո՞ւր է քաղաքըն աննըման ,
 Ո՞ւր է , ո՞ւր է յորում էր մեր
 Արքայն օծեալ :
 Ձայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
Եկայք տեսէք գուք զայն , օրհնեալք :
Պարեալ հոգւով անդ ցընծացաք ,
 Մարմնով զուարթուն ՚ սէր անկաք ,

Երբ ՚ի սուրբ լեառն այն հասաք .
 Ո՞ւր է տեղին բարձրացուցման ,
 Ո՞ւր է , ո՞ւր է յորս կայր մեր կեանք
 Անդէն կախեալ :
 Ձայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
Եկայք տեսէք գուք զայն , օրհնեալք :
Օրհնաբանեալ զմեր Արարիչ
 Հզպարգեւացըն ընձեռիչ ,
 Երբ հայեցաք զայն կառափիչ .
 Ո՞ւր է սուրբ լեառն Գողգոթայն ,
 Ո՞ւր է , ո՞ւր է յորում Յիսուս
 կայր տարածեալ :
 Ձայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
Եկայք տեսէք գուք զայն , օրհնեալք :
Ղեկաբեկաւ սըրտի մեր նաւ
 Ցահէ փառաց նորին անբաւ ,
 Ուր խընդիր մեր յառաջ եդաւ .
 Ո՞ւր է վեմըն այն պատառման ,
 Ո՞ւր է , ո՞ւր է յոր կայր անմեղ
 Գառըն զենեալ :
 Ձայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
Եկայք տեսէք գուք զայն , օրհնեալք :
Որդւոց մարդկան սակըս մեղաց
 ՚ ի խաչ ել անդ Տէրըն փառաց ,
 Ձայն վայր հարցաք արիւնամած՝
 Ո՞ւր է տեղին կողին խոցման ,
 Ո՞ւր է , ո՞ւր է յորում ջուր եւ
 Արիւն բըղլսեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Ապրսափելիդ 'ի Հրեշտակաց
 Բարեբաննեալ համայն յաղանց ,
 Զքեղ աղաչեմք , ով Տէր գըթած ,
 Ուր է լեղին այն դառնութեան .
 Ուր է , մւր է զոր ընկալար
 Դու ծարաւեալ :
 Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Վայ եւ եղուկ մերոց անձանց
 Զի մատնեցաք ըզքեղ մեղաց ,
 Արդ նչ ցաւեալ կըրկին հարցաք ,
 Ո՞ր այլ ցաւոցդ քո նըման .
 Ուր է , մւր է զոր կըրեցեր
 Դու խոնարհեալ :
 Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Արդարութեան է նա աղքիւր ,
 Դատապարտեալ կամաւըն իւր ,
 Զարչարանօք որ անդ տանջիւր ,
 Ուր է արիւնն սուրբ ոռոգման .
 Ուր է , մւր է սուրբ գլուխ փըչօք
 Իւր պսակեալ :
 Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Բամից ստեղծողն դու էից
 Հարեալ յեղեգըն յոյժ ձաղից ,

Որով հայցեմք ըզմուտ ելից ,
 Ուր է տեղին զքեղ կատակման ,
 Ուր է , մւր է յորս գանեցար
 Անդ հայհոյեալ :
 Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Դատեալ որպէս նա պարտաւոր՝
 Բառնայր 'ի յուս զիայտ ահաւոր ,
 Ի բանտ մահու լեալ ուղեւոր .
 Ուր է տեղին այն արգելման ,
 Ուր է , մւր է յոր զԱդամայն
 Լզպարտս քաւեալ :
 Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Անապական իւր սուրբ մարմնով
 Յոյժ վըշտագնիւր նա տագնապով ,
 Կըրկին ըզիսաչ բառնայր ուսով ,
 Ուր է տեղին այն գըլորման ,
 Ուր է , մւր է յոր կայր Փըրկիչ
 Անդ մերկացեալ :
 Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
Պարտաւորեալ հանդէպ Խաչի
 Երես անկեալ կամք առաջի ,
 Եւ հարցանեմք զլոյսդ կենդանի ,
 Ուր է մուրհակ այն պատառման
 Ուր է , մւր է զոր ջընջեցեր
 Արեամք սըրբեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն, օրհնեալք :

Երբ հաւանեալ նա պատեցաւ

Ի Յովսէփայ փառօք բարձաւ,

Գանձըն կենաց անդ զըմէցաւ .

Ուր է տեղին այն պատանման .

Ուր է, ուր է յոր ըզծածկոյթ

Հնոյն էր զգեցեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն, օրհնեալք :

Տարեալ եղաւ ՚ի Գերեզման,

Ի զինուորաց թողեալ պահպան ,

Ծածկեալ ՚ի սիրտ երկրի մըթան ,

Ուր է տեղին այն սուրբ թազման ,

Ուր է, ուր է յորում էր գանձն

Անմահացեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն, օրհնեալք :

Են որ յարեաւ չըքեղ փառօք՝

Ցարոց զընութիւնըս իւր սարօք .

Լըսց ըզմեղ իւր պարգեւօք .

Ուր է տեղին սուրբ Ցարութեան ,

Ուր է, ուր է յոր կայր Հրեշտակ

Ջինջ լուսափայլ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն, օրհնեալք :

Երգ Երրորդ

Ի վերայ սրբոյ Երուսաղէմի եւ այլ սուրբ Տեղեաց *

Ի սէր հարեալ Աստուածակոս

սուրբ քաղաքին ցանկալի ,

Յար եւ յաւէտ կարօտութեամբ
անձն իմ հիւծի միշտ հալի .

Նորին տեսոյն սիրտ իմ բաղձմամբ
աչս արտասուօք լցեալ լի .

Դէպ ՚ի յերկիրն սուրբ Աւետեաց
առնէր տանէր հովն զիս :

Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :

Առին սիրոյն եւ տեսլենէն

Հկարացի ես յագիլ ,

Ի հեռանալս եւս առաւել

ունիմ կարի բորբոքիլ :

Յոր վայր նստիմ ուր եւ իցեմ
չունիմ երբէք դադարիլ .

Դէպ ՚ի քաղաքն աստուածակոս
առնէր տանէր հովն զիս ,

Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :

Օդաթուիչ թեւըս տայր ինձ

ամենազօր Փրկիչն իմ ,

Որ սլացեալ հասանէի

՚ի սուրբ Տեղիսն ըղձագին .

Կրկին դիպեալ սուրբ վայելմանց
 լինէի ես խնդագին .
 Դէպ ՚ի յերկիրն սուրբ Աւետեաց
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
 փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :
Տապիմ տենչմամբ մեծ Տաճարին
 սուրբ Յարութեան մեր Փրկչին ,
 Ուր կան տեղիք շնորհաձիր ,
 Գերեզման Տեառն արարչին .
 Ժամերգողաց երգ քաղցրաձայն
 միշտ յունկս իմ առ հնչին .
 Դէպ ՚ի Տաճարն սուրբ Յարութեան
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
 փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :
Անձկացեալ եմ այն Արբազան
 տեղւոյն՝ որ կայ ՚ի յԱյրին ,
 Ուր Տէրն մեր Ծնեալ եդաւ
 ՚ի լուսափայլ սուրբ Մորին .
 Դասք Հրեշտակաց անդ պար առեալ
 օրհնաբանիչ միշտ լինին .
 Դէպ ՚ի սուրբ վանսըն Ծըննդեան
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
 փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :
Բոտեալ ըղձիւ միշտ փափաքիմ
 ամենահրաշ տաճարին ,

Ամենօրհնեալ մօր Տեառն իմոյ
 գերամաքուր սուրբ Շիրմին .
 Ուր Սերովեէք եւ Քերովեէք
 անտեսաբար գումարին .
 Դէպ ՚ի տապան սուրբ Տիրամօրն
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
 փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :
Եռանդագին եմ կարօտիւ
 սուրբ Յակովեանց մեծ Գահին ,
 Ուր կայ տապան Տեառնեղօր
 ներբց Աւագ սեղանին :
 Ա.Ա. եւ որդւոյն Զեբեդեայ
 Գրլիսագիրն այն ցանկալին .
 Դէպ ՚ի յԱթոռն սուրբ Յակովեանց
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
 փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :
Ակրով մեծաւ հեռուստ աստի
 ծունք եւ համբոյր արդ ձօնեմ ,
 Շնորհաբաշխ քարանց հողոյն
 ըզդէմս իմ առփարեմ .
 (Ա.Ա. մեծ) թուոյս կարօտակիր
 Հէննէս զերգս յարմարեմ ,
 Դէպ ՚ի քաղաքն աստուածակոյս
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
 փչէր տանէր հովն զիս՝ հովն զիս :

ԵՐԳ ԶՈՐՈԲԴ


Գովասանուքին ՚ի վերայ սրբոյ Երուսաղէմի :


ՅԱստուծոյ շինեալ քաղաք պատուական,
Ցանկալի զուարթնոց եւ որդւոց մարդկան。
Զքեզ նորոգեաց Դաւիթ մեծ արքայն,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական :
Անմահ արքային դու ես բնակարան,
Որդւոյն Աստուծոյ վայր տնօրէնութեան .
Ազինք ամենայն գալ առ քեզ ցանկան,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման :
Կամարին երկնից ես հանգունական,
Առ դիրս աստեղաց ՚ի հաստատութեան,
Ընդ կենդանակերպսըն երկոտասան,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական :
Որդւոյն Յակովայ տուար սեփհական,
Վիճակաւ անկար տոհմին Յուդայեան .
Քեզ շինեաց տաճար Սոլոմոն արքայն,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման :
Բուրէ միշտ ՚ի քէն հոտ անմահութեան,
Վարդի շուշանի խընկոց զանազան,
Կամ ազնիւ իւղոց նարդից բալասան,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական :
Քաղաք ես դու մեծ թագաւորական,
՚ի քեզ կառուցաւ նոր Սոլոմոնեան,
Աշխարհամատրան տաճար Յարութեան,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման :

Աղեիւր Սելովամ ջուր անմահութեան՝
Բղիսեալ զովարար ծարաւ բընութեան .
Դու մեզ նոր Սիոն քրիստոնէութեան
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական :
Հաճեցաւ ՚ի քեզ Տէրըն վերնական,
Վէմ ընտիր եղեալ ՚ի գըլուխ անկեան .
Զի ինքըն Քրիստոս ՚ի քեզ յարաժամ,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման :
Աստ եղեւ հոգւոյ փրկութիւն մարդկան,
Որ ել իսկ ՚ի խաչ Տէր ՚ի Գողգոթայն .
Ցանցանքն Ադամոյ Եւայի թողան .
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական .
Նոր երկինք յերկրի հրաշափառական,
Դու նոր արեւելք նոր արեգական .
Նորոգեալ ցնծան դասք քրիստոսական,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման :
Առ քեզ գանձ բազում հոգեւորական,
Որով լիանան աշխարհ ամենայն .
Նախ եւ առաջին Տէառըն Գերեզման,
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական :
Յոյժ ահեղագոչ իշմամք մեծաձայն
Պար առնեն մուսայք միշտ համանգամայն,
Մեզ Քրիստոնէից լեր դու օգնական .
Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման :
Է' Գեթսեմանի ձորն արքունական,
Ուր Աստուածանին գիրն է եւ տապան .
Անդ լինելոց է վերջին գատառտան .
Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական :
ՀԱՅ-ԱՐՄ ՀՀ
2

Ամենայն սրբոց ես ընդունարան,
 Եւ մեղաւորաց մարդկան քաւարան.
 Իքէն մտանեն ՚ի Երկնից խորան,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման:
Աթրտ Երկրի ես գու Տեառն տիրական՝
 Հանգոյն Աթոռոյն քերովքէ ական.
 Ոտից Արարչին եղեր պատուանդան,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական:
Արդ՝ չունիմ կարիք զոր քեզ է արժան
 Բարբառել բանիւք գովասանական.
 Կամ տաղիւ չափել երգ ներբողտիկան,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման:
Ցնծութիւն ես գու աշխարհի համայն,
 Առաւել Հայոց ազգիս Արամեան,
 Որք սեռն սիրով դիմեն առ քեզ գան.
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական:
Երեք տաճար են աստ հիացական,
 Մեծի Յարութեան եւ սուրբ Ծըննդեան,
 Եւ սուրբն Յակովը փառաւորական.
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման:
Աբբային Երկնից բարելի սեղան,
 Խունկ եւ Պատարագ ՚ի քեզ վերանան.
 Շնորհք սուրբ Հոգւոյն քեւ առ մեղ միշտ գան,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական:
Լրցեալ տօմարիս մեր Յարեթական՝
 Հաղար եւ ութսուն թիւն էր ՚ի լըրման,
 Յակովէս այս Երգ քեզ ընծայեցան.
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման:

Եթին անեղին՝ սուրբ Երրորդութեան
 Փա՛ռք եւ գոհութիւն միշտ եւ յաւիտեան
 Արա՛ զմեղ արժան քոյն տեսութեան,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական:
Դասք Երկնից զօրաց շուրջ զքեւ պարեն,
 Զիսաչեալ Փրկիչն մեր օրհնաբանեն,
 Որ եկն ազատեաց զմեղ գերողէն,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննըման:
Ո՛չ գոյ նըման քեզ ՚ի մէջ աշխարհի,
 Որ յար նըման ես վերին Սիոնի.
 Արժան արա՛, Տէր, տեսլեամբ սուրբ Երկրի
 Զազգըս մեր համայն սիրով ըղձալի:





ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ Գերեզմանին Քրիստոսի:

Իմց Փլրկչին սուրբ Գերեզման,
Աննիրհ Տեառըն դու քընարան.
Զուարթունն ձայնէր ուրախական,
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:

Սոր վիմափոր դիր հրաշական
Աստուածային մարմնոյն նընջման.
Զինուորքն եղեն զարհուրական.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:

Օթեալ ՚ի քեզ լոյսն իշական
Յերիս շրջան արեգական.
Ելմամբն ՚ի քէն կնիք քո չեղծան.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:

Տարեալ ՚ի քեզ զվէմն երկրալիր՝
Ծագեաց ՚ի սփիւռս լոյս երփնածիր,
Կուամնլութեանց տայ ցան եւ ցիր.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:
Առիւծն Յուդա այն Յակովեան
Յառնէ ՚ի քէն ՚ի քնոյ նընջման,
Կոսպոէ զկապուտն յաղթողական.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:
Բամբ իւղաբեր կանանց եկին,
Զվէմն ՚ի դրանց բարձեալ տեսին.
Զուարթնոյն լուեալ տարածեցին.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:
Են յարեալ նախ Մօրն երեւեալ,
Մագդաղենոյն յետոյ յայտնեալ,
Մետասանից ապա դիմեալ.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:
Աերովքէն կայր առ դրան քոյին,
Լուսափայլ էր նիստ ՚ի վիմին.
Զայնիւ մեծաւ գոչէր ուժգին.
Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց:

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Գովասանուրիւն ՚ի վերայ սրբոյ Գերեզմանին
Քրիստոսի :

Սուրբ Գերեզման յոյժ գովելի,
Համայն աղանց ես ցանկալի .

Առ քեզ դիմեմք աղերսալի ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Աթոռ եղեր դու Արարչին ,
Հանգըստարան անմահ Փըրկչին .
Զարչարելցն ՚ի փայտ Խաչին ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Այն որ ՚ի նմին ահեղ գոչեաց ,
Երեքօրեայ ՚ի քեզ նընջեաց ,
Ինքն զարթեաւ եւ զմեզ փըրկեաց .
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Դու ես պարծանք քրիստոնէից .
Յոյս յարութեան մեզ համայնից .
Ըզեզեղ Աստուած փառօք ելից ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Ի Սերովելից օրհնաբանիս ,
Ի քրիստոնէից Երկրպագիս .
Քան զարեգակն պայծառ փայլիս ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Լուսապայծառ սուրբ Գերեզման ,
Աստուածորդւցն տեղի թալման ,
Անմահութեան հոտոյն բուրման ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Սուրբ եւ մաքուր Գերեզման կոյս .

Գրիստոնէից պարծանք եւ յոյս .
Ի քէն բըղսի միշտ պայծառ լոյս ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Յոյժ փափագիմք օրհնեալ տեսոյդ .
Եւ կարօտիմք քաղցրիկ գեղսդ .
Երկրպագեմք քարիդ՝ հողոյդ ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Արժանացն քում տեսութեան .
Եւ բաց մեզ դուռն զողորմութեան .
Քանզի գին եմք անդին արեան ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Գերեզման ես լուսափայլեալ ,
Աքանչելափառ Տաճար կազմեալ .
Տեառն Աստուծոյ տուն անուանեալ ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Ապրսափելի ես Հրեշտակաց ,
Եւ սոսկալի հողեղինաց .
Դու յարկ եղեր Բանին կենաց ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Ի քիմն անցոյ հոտ ծաւալի
Ըզեամբս քո համբուրողի .
Զքեզ տեսողաց բիւր Երանի ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

ԶԳերեզմանդ կընքեալ բանան .
Եւ ցընծութեամբ անդր ընթանան .
Զլոյս քո տեսեալ ուրախանան ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Առ թաղեալըն ՚ի քեզ մաղթեմք .
Արժանանալ տեսոյդ խընդրեմք .
Նըմա եւ ֆեզ երկըբագեմք .
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

ԵՐԳ ԵՈԹՆԵՐՈՐԴ

Դարձեալ ՚ի նոյն՝ աղերսախառն :

Առ քեզ եկից սըրտափափագ .
Զքեզ համբուրել տենչիւ անյագ .
Զիս ՚ի մեղաց փըրկեա արագ ,
Մեղաց փըրկող սուրբ Գերեզման :
Ի մէջ մեղաց անկեալ գերի ,
Յամեն կողմանց գըտեալ թերի .
Ողորմեա ինձ մեղաւորի ,
Մեղաց փըրկող սուրբ Գերեզման :
Ի դուռնըդ գամ թէպէտ լալով ,
Բայց փառս տամ աղօթելով ,
Լուսոյդ հոտովն ըզմայլելով ,
Մեղաց փըրկող սուրբ Գերեզման :
Բաղումք ընդ իս ընթացակից .
Ես ՚ի սէր քո յոտսըդ եկից .
Արրբել հոգւով երկըբագից ,
Մեղաց փըրկող սուրբ Գերեզման :
Վասմաւ ՚ի խաչ բեւեռելոյն ,
Արիւնաներկ խոցեցելոյն ,

Փառօք ՚ի քեզ թաղեցելոյն ,
Մեղաց փըրկող սուրբ Գերեզման :
Զաշխարհ ամեն զուարթերես
Արով կապեալ յոտսըդ բերես ,
Եւ համայնից նոցա ներես ,
Մեղաց փըրկող սուրբ Գերեզման :
Անմահ փըրկչին դու աննըման
Եղեր տեղի Մարմնոյն թաղման .
Եւ ՚ի Հօրէ լուսոյն ծագման
Անուանեցար լոյս Գերեզման :

ԵՐԳ ՈՒԹՆԵՐՈՐԴ

Ուղերձ մաղբանաց առ. Աշխարհամատրան Տաճարն
որ ՚ի սուրբ Յարուքեան :

Արփիահրաշ դու հարսնարան
կենարարին ,
Երկինք յերկրի լուսափայլեալ
գեր քան զարփին .
Մահու մարմնով նընջողն ՚ի ծոց
՚ի քո շիրմին
Յարեաւ փառօք , ձայնէր զուարթունն
ահա տեղին ,

Մայր Տաճարաց սուրբ Յարութիւն
 մեր հոգեծին ,
Անմահութեան ՚ի քէն պարգեւք
 մեզ ծագեցին .
Առ ընդհանուր Եկեղեցիս
 ծագաց երկրին ,
 Բղխեցին գետք յորդախաղաց
 ջուր կենդանին :
Քեզ յամենացն լեզուաց ազգաց
 անլըռելին
Միշտ օրհնաբան հոգենուագ
 ձայնք աստ հնչին .
Քեւ արդ փառօք ցրնծայ յաւետ
 ազգ Հայկազին ,
 Ինոր սեղան զենմամք անմահ
 սրբոյ Գառին :
Արդ խոնարհեալ սրբոյ Տեղւոյս
 շնորհաց քոյին՝
 Փառս վեր երգեմք յարուցելոյ
 քեզ Ոնմահին .
Երկրպագուացու ուր կամք սրբոյ
 Գերեզմանին ,
 Տացես դասիլ անմահական
 քում վիճակին :
Յողոք անկեալ մաղթեմք ըզլոյստ
 իմանալին ,
 Յերկնախումք պար խառնեալ զմեզ
 տաճար վերին .

Պամեալքս աստէն ՚ի միութիւն
 սրահի քոյին ,
Գեղանըշոյլ ըզմայլս սցուք
 յիսկականին :

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Ա. սուրբ Բանտն :

Քեզ Հօր լուսոյ երկնաւորի
 հոգւով քեկման՝
 Երկրպագեմք ՚ի Տաճարիս
 այս սրբութեան .
 Ուր միածին Որդիդ եկեալ
 լոյն անսահման ,
 Վառեաց ըզսէր ընդ Աստուծոյ
 եւ ընդ մարդկան :
Աշխարհագոյժ այս վայր Փրկչին
 սըրբասահման
 Եղեւ չորրորդ տեղի մըթին
 բանտ արգելման .
 Ուր դա վերջին հասեալ վըշտաց
 անարգական ,
 Յաղերս առ քեզ ձեռք մեր յերկինս
 աստ ամբառնան :
Հան ՚ի բանտէս , լո՛ծ ՚ի կապէս
 զամենեսեան ,

Ուզգեա գընալ ըզհետ Որդւսդ
միշտ անխափան .
Հանդո՞ զհոգիս նախնեաց մերոց
յերկնից խորան ,
Պարեալ ցընծալ ընդ Հրեշտակաց
ի յաւիտեան :

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի տեղիմ՝ ուր զիանդերձան բաժանեցին :

Փըրկիչ մեր եւ Տէր յաղթողըն մահու
տուիչըն կենաց ,
Գայ ՚ի մահ Խաչլ . տայ զարիւն իւր սուրբ
՚ի գին փրռկանաց ,
Ա. յնմ՝ որ արկանէ որպէս ըզհանդերձ
զլոյս անձառ փառաց ,
Վիճակ արկանեն հանդերձի նորա
դասքըն զինուորաց :
Որում վրկայէ մեզ տեղիս այս սուրբ
պաշտեալ Հրեշտակաց
լնդունելով միշտ երկրպագութիւն
յիւրոց սիրողաց .
Ուր այժմ ՚ի թափօր պար առեալ շըջիմք
ձայնիւ երգասաց ,
Եւ աղաղակեմք լուր Փըրկիչ բարի
մեր պաղատանաց :

Մերկեա ՚ի մէնջ Տէր մերկութեամք քոյին
զգործ խաւարամած ,
Եւ ըդգեցն մեզ զէն արդարութեան
զըրահ անթափանց ,
Փոխան հանդերձիդ՝ որ անհերձ մընաց
վիճակ զինուորաց ,
Վիճակեա ըդմեզ ՚ի քո միութիւն
յերկրին կենդանեաց :

ԵՐԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ խալին :

Միշտ որ ընդ Հօր՝ է նա պարզ մի ,
Որ ընդ աշմէ նորին բազմի .
Ա. յսօր ում՝ Խաչ աթոռ կազմի ,
Հանդչարան մի ո՛չ գըտանի :
Շարակցեալ ընդ մարմնոյ բաւի ,
Որ բարձողն է մերօյս ցաւի .
Իսկ այժմ ՚ի Խաչըն ծարաւի ,
Արբուցիչ մի ո՛չ գըտանի :
Աղքիւր կենաց յորմէ հեղի
Անդուլ ՚ի դասս մարդկան ցեղի ,
Եւ ինքն ՚ի մէջ նեղաց նեղի ,
Հանդուցիչ մի ո՛չ գըտանի :
Կարդայ առ Հայր իւր սիրելի ,
Զայն ածելով էլի էլի .
Եղեւ մեռեալ եւ պատելի ,
Ում պատող մի ո՛չ գըտանի :

ԵՐԳ ԵՐԱՌԱՍՎԱՆԵՐՈՐԴ


Ի տեղաոց Գիւտի սրբոյ Խաչին :

Մեծափափաք էին բաղձանք
Աստուածասէր սուրբ Դժմոյին ,
Մեծ թագուհւոյն սուրբ Հեղինեայ
Առ գիւտ անգիւտ սրբոյ Խաչին :

Որ ըզծածկեալն հարուստ ամօք
Ընդ բազմակայտ խերեւեշին ,
Ոսկի արծաթ եւ մարդարիտ
Սրբուեալ խնդրէր ըզբաղձալին :
Եւ մեք նորին շաւզաց կրցորդ
Եկեալ հասաք ՚ի նոյն տեղին .
Յածեալ ընդ ծով եւ ընդ ցամաք
Ի հեռաւոր ծագաց երկրին :

Փոխան ոսկւոյ եւ արծաթոյ
Եւ բազմաթիւ այն մարդարտին ,
Զհաւատ , ըզյոս , ըզսէր անկեղծ
Մատուցանեմք կենարարին :

Զքեզ աղաչեմք՝ պահեա Փրրկիչ
Ընդ հովանեաւ քո սուրբ Խաչին ,
Ըզերմեռանդ զերկրպագուս
Եւ զազգս ողջոյն ուր եւ բնակին :
Փըրկեա զնոսս չար յարկածից ,
Տնուր քաւութիւն մեղաց նոյին ,
Ուրախացո տեսութեամբ քով
Ի յերեւիլ սուրբ Նըշանին :





ԵՐԳ ԵՐԵՔՏԱՍՎԱՆԵՐՈՐԴ

Առ Փուշ Պսակն :

Աթոռ շնորհաց աստուածաբարձ
Քառակերպեան կառաց քատակ ,
Թագաւորին քո պատմուճան
Ո՛չ բեհեղեայ գերփառունակ ,
Այլ հընոտի քղամիդ կարմիր
Ըզեցուցին առնել ծանակ .
Եւ բարձողին ըզփուշ մեղաց
Եղին ՚ի գլուխ փըշեայ պըսակ .

Տուեալ զեղէգն յաջոյ ձեռին
Փոխան ոսկւոյ լգաւազանին .
Ի ծունր իջեալ բարբառէին՝
Ո՞վ լեր , Աբքայ , Հրէից ազգին :
Ծածկեալ զերեարն տանջէին ,
Զգլուխն եղեգամք հարկանէին .
Եւ հանէին նրմա ապտակ ,
Եւ ով եհար՝ հարցանէին :
Մեղէր պատկան փըշեայ պըսակ
Եւ դան մահու դառնագունին ,
Զոր ընկալար Աստուած հըզօր ,
Առ ՚ի փըրկել զազդ մարդկային :
Աստուածազարդ դու պսակեա
Լզմեր գըլուխ շնորհօք քոյին .
Մեր երեսաց ամօթ յետին ,
Եւ քոյին փառք միշտ բարձրասցին :



ԵՐԳ ՉՈՐԵՔՏԱՍԱՆՆԵՐՈՐԴ

Գովասանք ՚ի վերայ սուրբ Գողգորային :

Սուրբ Գողգոթայն բարձր է շինեալ ,
Պայծառափայլ է յօրինեալ ,
Արիւնաներկ Խաչ է կանգնեալ .
Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
Սուրբ Գողգոթայն շընորհազեղ ,
Բոլորովին է ուխտատեղ ,
Հող եւ քարինքն են մեղաց դեղ .
Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
Սուրբ Գողգոթայն մինչ շինեցին ,
Կաթամք ըզկիր շաղախեցին ,
Զի ըզձէր մեր անդ խաչեցին .
Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :

Առւրբ Գողգոթայն է գեղեցիկ ,
 Ի շըրջապատն Եկեղեցիք .
Առւրբ Ըզիաչըն անդ պաշտեցիք .
 Եկայք Ելցուք ՚ի Գողգոթա :
Առւրբ Գողգոթայն տեղ է լալս ,
 Եւ ըզմեզս մեր քաւելս ,
 Ըզդուռն Երկնից առ բաղխելս .
 Եկայք Ելցուք ՚ի Գողգոթա :
Առւրբ Գողգոթայն սարսափելի ,
 Յոր աղօթելն ընդուռնելի .
 Դիւրին լինի անդ լսելի .
 Եկայք Ելցուք ՚ի Գողգոթա :
Առւրբ Գողգոթայն ակնեղեն թագ ,
 Տեսանողաց կըրկնի փափաք ,
 Աղօթս առնել անդէն անյագ .
 Եկայք Ելցուք ՚ի Գողգոթա :
Առւրբ Գողգոթայն է սուրբ վայր մի ,
 Համբուրողաց Տէրն ողորմի ,
 Առ գտանել մեղաց ձար մի .
 Եկայք Ելցուք ՚ի Գողգոթա :
Առւրբ Գողգոթայն է բարետուր ,
 Զհայողն ՚ի վեր կալնու զարհուր ,
 Միշտ հոտ անոյշ տայ բաղցրաբոյր .
 Եկայք Ելցուք ՚ի Գողգոթա :
Առւրբ Գողգոթայն գերամբարձեալ ,
 Յոր խաչեցաւ Փըրկիչն օծեալ ,
 Որ զՅովհաննէս փոխանակեալ ,
 Որդի ետ մօրն ամենօրհնեալ :

Ի Գողգոթա տարածեցին ,
 Ըզձեռս եւ զստուն ծակեցին ,
 Զմայրիկն ՚ի դէմըն լացուցին ,
 Զի սուրբ ըզմիտըն խոցեցին :
Քրիստոս Ոստուած մեր խաչեցաւ ,
 Ի Գողգոթա բեւեռեցաւ ,
 Ցերեկն ՚ի խոր գիշեր դարձաւ ,
 Զի արեգակն խաւարեցաւ :
Յայնժամ սուրբ կրյոն աստուածածին
 Կայր առ Խաչի պատուանդանին ,
 Փետէր Թափէր զմազն ՚ի գետին ,
 Զի Միածինն էր ՚ի Խաչին .

ԵՐԳ ՀՆԳԵՏԱՍԱՆՆԵՐՈՐԴ

Դարձեալ առ սուրբ Գողգորա :

Դու Փըրկիչ եւ յօյս մեր
 Ընդ այսքան խոնարհիս .
Ի գագաթ այս լերին
 մահագոյժ տարածիս .
Ո՞ր քո դէմք լուսափայլ
 Երկնաւոր Արքայիս ,
Երկրաքարշ խոնարհեալ
 ծով արեան ծածանիս :
Տագնապաւ գողացան
 ընդ տեսիլ ահագին

Վերնային լուսաւորք
 եւ երկիր ընդ նոսին .
 Ուր վասն իմ քառաթեւ
 տարածեալ ՚ի Խաչին .
 Բարձրացար ՚ի տեղւոյ
 ետուր զքեզ առ իմ գին :
Տէր ՚ի քո յայս բեմէս
 դարձ հայել սիրաբուն
 Առ փրկեալքս քո արեամք
 առ սուրբ ուխտս այս ողջոյն .
 Յօղեսցին ցօղք շնորհաց
 ՚ի վերայ քոց ՚ի նոյն ,
 Տացին մեզ կեանք անմահ
 յայս անպարտ քում մահուն :

ԵՐԳ ՎԵՇՏԱՍԱՆՆԵՐՈՒԴ

Ա.Ա. սուրբ Պատանատեղին :

Յարեմաթեայ Յովսէփ արդար
 ՚ի սուրբ Խաչին առ զՏէրն ՚ի վայր ,
 Երեքսըրբեան երգ խաչեցար
 Երդաբանէր մաղթողաբար :

Հըսաբորբոք խոցք բեւեռաց
 Հատանէին զշանթ կայծականց ,
 Որով բազմէր նորին բազկաց
 Վարդակարմիր արեամք ներկած :

՚Աիկոդեմօս անդ հանդերձէր
 լզմուռս , հալուէս , իւղըս ՚ի նուէր ,
 Դա որ մահու եւ կենաց տէր
 Աստ ՚ի պատանըս օծանէր :
 Պատարագէր յայս տեսարան
 Երանուհին մայր Մարիամ .
 Տարտամ մոօք յուժաթափման
 Էր իւր Որդւոյն ՚ի յանդիման :



ԵՐԳ ԵՕԹՆԵԿՏԱՍՆԵՐՈՐԴ

Ի վերայ սրբոց Յակովէանց Տաճարին :

Համայն աղանց ես գովելի
պայծառ Տաճար գեղեցիկ .
Հիմնեալ յանուն Առաքելոց
սուրբ Յակովէանց երջանիկ .
Երբեղապանձ ձեւով կանդնեալ,
շափիւղայ են քոյդ քարինք .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :
Են ՚ի վերայ չորս սեանց ձբգեալ
ձեղունք ահեղ բարձրագոյն .
Առ որս արկեալ թեւատարած
ամուռ կամարք լայնագոյն .
Յորոյ վերայ կայ հոյակապ
գմբէթ քոյին մեծագոյն .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :
Երբոյ Աւագ սուրբ խորանիս
կայ անգին գանձ պատուական ,
Տեառընեղօր սուրբ Յակովէայ
մարմին եղեալ ՚ի դամբան .
Որս սուրբ գահն ՚ի քեզ փայլի
ըստ արեւու հրաշական .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :

Աս եւ որդւոյն Զեբեդեայ

առաքելոյն Յակովէայ
Սուրբ Գրլսոյն դիրքն գըմբէթայարկ
սեղան վերայ կազմեալ կայ .

Որով երկու լուսաւորօք
նըման երկնից գու ցընծա՛ ,
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :

Ե եւ տապան սուրբ Մակարայ
որ Գրլսադրին մերձ փայլի .
Մատուռն ըքնաղ կից առ նմին
սուրբ Մինասայ սուրբ Սարգսի .
Տաճարը պայծառ Առաքելոց
են վերամբարձ եւ սուրբ Խաչի .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :

Ատեփաննոս , Էջմիածին
տաճարը ըքեղ հրաշաղան ,

Որք ընդ թեւօք յաջ եւ յահեակ
պարայածեալ ըոլշողան .

Վերնայարկիդ Պետրոս Պօղոս
առաքելոց կան սեղան .

Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :

Կայ ՚ի ծոցի մենաստանիդ
սուրբ Թորոսի մեծ Տաճար ,
Հոգւոյն Որբոյ զատ այլ մատուռն
ձգեալ բարձրանց գեղապար .

Քսան եւ եօթն ՚ի միջի քում
Խորանք պաշտին գերափառ ,
Պարձանք մերոյ Հայոց ազգի ,
նվ սուրբ Տաճար ցանկալի :

Յաւելեալ յետոյ :

Ի սոցին փառս յաւել ՚ի քեզ
գար որ առ մեզ սսկեղէն ,
Հիմնադրութիւն քո Վերնատան
գաւթեան վերայ մեծաշէն .
Լուսամըտօք անդ , եօթնեքումբք
Ճաճանչ պայծառ շղզղէն .
Պարձանք մերոյ Հայոց ազգի ,
նվ սուրբ Տաճար ցանկալի :
Երդ մաղթանաց եօթնափառեան
օրհներգութեանց աստ մատչին ,
Ընդ անարիւն ձօն հաշտարար
անմահ զենման սուրբ գառին .
Պայծառազգեացք եւ ծաղկասփիւռ
թափօր ՚ի պար բոլորին .
Պարձանք մերոյ Հայոց ազգի ,
նվ սուրբ Տաճար ցանկալի :

ԵՐԳ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Դարձեալ պատմաբանօրին ՚ի վերայ Գյլսաղրի
սրբոյն Յակովբայ :

Քըրիստոսի սուրբ գերեզման
Միշտ կանթեղք քո են ՚ի վառման
Որբ ուխտ դնեն եւ առ քեզ գան ,
Ամենեցուն լեր օգնական :
Սուրբ ըզՅակովք գըլսատեցին ,
Նախ ՚ի Սաղիմ ամփոփեցին ,
Եկեղեցի հիմնարկեցին ,
Սուրբ Գըլսադիր անուանեցին :
Ապա Հրեշտակը անտի առին
Զ'առանց գըլսոյ նորին մարմին ,
Հրամանաւն աստուածային
Ի Սպանիա քաղաք տարին :
Եւ քաղաքն այն էր մերձ գետոյն ,
Զմարմինն եղին յեզըր ջըրոյն ,
Ի յազդմանէ Աստուած հոգւոյն
Ընդ այդն եղեւ գալ ժողովոյն ,
Կաղքըն եւ կյորը միահաղոյն
Եկին լուանիլ ՚ի մէջ գետոյն ,
Անդ պատահեալ նոյն սուրբ մարմնոյն
Բրժըկեցան յամեն ցաւոյն :
Ուրախութեամբ դարձեալ ՚ի տուն
Մեծ աւետիս մարդկան ետուն ,
Յոր թէ ռամիկ թէ իմաստուն
Զարմանալեօք լըցան համբուն :

Խորհրդակցեալ ընդ արքային
 ի գետըն յայն ջոկ ջոկ գային .
 Տեսեալ ըզնա արտասուէին ,
 Անգլուիս Աստուած անուանէին :
Բերեալ բեհեղ զայն պատեցին
 Եւ ՚ի քաղաք անդ հանգուցին ,
 Պատուեցին յոյժ եւ պաշտեցին
 իբրեւ զԱստուած մեծացուցին :
Մինչեւ սուրբըն Պօղոս գընաց
 Քարոզել անդ լզբանն կենաց ,
 Սպանիացւոց միտորն երաց ,
 Դա մեր եղբայրն է մինչ ասաց ,
Մոլորութիւնք նոցին բարձան .
 ի պաշտմանէ կրոսց դարձան ,
 Եւ Քրիստոսի հետեւեցան ,
 Արքայութեան արժանացան :



ԵՐԳ ԻՆՆԵԿՏԱՍԱՆՆԵՐՈՐԴ
 Դարձեալ պատմաբար ՚ի վերայ սրբոյն Յակովայ :

Առաքեալն սուրբ Յակովը
 որդին որոտման ,
 Զոր կալեալ չարչարէր
 Հերովդէս արքայն :
 Եղեւ նա գլխատեալ
 յազգէն տիրասպան ,
 Զի ըզբաժակըն ըմպել
 Տեառն էր հրաման :
Ընդ սուրբ Կյուսն Տիրամօր
 առաքեալն Յովհան
 Մինչ կային վարանմամբ
 զՅակովայն կալման .
 Հըրեշտակըն բերեալ
 զգլուին պատուական ,
 Եդ նոցա առաջի
 կոծով թախծութեան :
Զոր առեալ հանգուցին
 զգլուին սրբազն
 ի տեղւոջ պատշաճեալ ,
 զԺեառնէ գոհացան .
 Ուր վանք մեծ շինեցաւ
 թագաւորական ,
 ի ձեռըն կոստանդիու
 եւ մեր Տրդատայն :

Ընդ սուրբ Լուսաւորչին
 ազգիս Հայկազնեան,
Եր սուրբն Սեղբեստրոս
 պապըն Հռովմայն .
Եմեցին յոյժ սիրով
 զտեղիս սրբութեան .
Ըտաձար Յարութեան
 եւ զայլս ամենայն :
Հաստատեալ մայր Աթոռ
 առաքելական
Զտաձարն սուրբ Յակովը
 Պատրիարքական ,
 Որ է վայր ցանկալի
 ազանց ամենայն ,
 Եւ ազգիս Արամեան
 պարգեւ սեփական :
Արդ է մեծ եւ պայծառ
 վանք Երկնանըման ,
Գլխադիր սուրբ Յակովը
 փառօք աննըման ,
Տուեալ տանս Թորգոմայ
 ընծայ յատկական ,
 Ուխտաւորաց բաղմաց
 հանդիսաւ օժարան :
Առ սուրբ Յակովը
 գերահրաշ Ուխտին ,
 Գան յամեն ՚ի կողմանց
 եւ անդ ժողովին .

Եւ առնեն բարեխօս
 ըզնա Արարչին ,
Աղօթիւքն արժանի
 գոլ վերին Դրախտին :

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Գովասանուքին ՚ի վերայ քսան Եսինագ խորանացն
 որ ՚ի սուրբ Յակովայ վանս :

Սախ եւ յառաջ զԱւագ խորան
 Առնուլ ՚ի գէպ է ինձ արժան ,
 Որ է պայծառ եւ աննըման ,
 Ունի ըզտիպ արեգական :
Եւ ՚ի ներքոյ սորին պանծայ
 Մարմին Եղբօր Տեառն Յակովը ,
 Որ ՚ի Հրէից սպանաւ նա ,
 Ուր մինչեւ ցայժմ ամփոփեալ կայ :
Յերկուս կողմանս սուրբ Սեղանին
 Երկու խորանք կան ՚ի կարգին ,
 Մինն է սրբոյ Աստուածածնին ,
 Իսկ միւսըն սուրբ Կարապետին :
Եւ ՚ի վերայ սոցին հիման
 Երկու փոքրիկ կան այլ խորան ,
 Սուրբ Պօղոսի եւ Պետրոսի
 Առաքելոցըն սրբազան :

Յահեկակողմն սոյն Տաճարի
 Գոյ սիրոյն մի Եկեղեցի ,
 Յանուն սրբոյ Եջմիածնի ,
 Ուր կայ սեղան սուրբ Ախնայի :
Թռէ 'ի դըրան կողմըն դարձցիս
 Եւ 'ի սանդղոց 'ի վեր ելցես ,
 Երկուս խորանս այլ եւս տեսցես ,
 Եւ ջերմ սիրով համբուրեսցես :
Մինըն Ընթրեաց սուրբ Խորհըրդին ,
 Այլափոխման է Երկրորդին ,
 Նորոգ եղեւ շինուածք սոցին
 Նախ քան ըղծեփ սուրբ Տաճարին :
Վ Երնատանէն 'ի վայր իջեալ ,
 Յաւանդասունն գնացեալ ,
 Ստեփաննոս է սա կոչեալ ,
 Որ 'ի սէր Տեառն նախ վըկայեալ :
Կըրկին սեղան անդ Ճոխ փայլի ,
 Մինըն յանուն Լուսաւորչի ,
 Եւ միւսըն սուրբ Ստեփաննոսի ,
 Որբ սիրելիք են Քրիստոսի :
Կայ անդ այլ եւ մեծ Աւազան
 Հայրապետի կիւրղի անուան ,
 Կենաց փայտին 'ի յերեւման
 Երկու հազարբ մըլլըրտեցան :
Ե՛ւ Դու աստի գալ 'ի կարգին ,
 ՏԵ՛ս ըզսեղան սուրբ Գլւագրին ,
 Ուր ամփոփեալ է Գլուխ նորին ,
 Մեղ պարգեւեալ գանձ մեծագին :

Ե մերձ սորա երկաթ գուռ մի
 Ուր կայ ազնիւ պահարան մի ,
 Եւ սուրբ Մինաս նա անուանի ,
 Որ յարաժամ փակեալ պահի :
Ուր ոսկեղէն արծաթեղէն
 Խաչ եւ կանթեղը անօթեղէն ,
 Սըրբոց մասունք բոլորն ամէն
 Մեծաւ խնամօք պահին անդէն :
Գոն անդ եւ այլ երկու խորան
 Ազնիւ շըրեղ եւ աննըման ,
 Սըրբոց Սարգսի եւ Մինասայն
 Զօրավարաց մեծաց անուան :
Կից սորա է եւ գամբարան
 Մաքուր տապան սուրբ Մակարայն ,
 Զի յԱթոռ յայս նստաւ եւ այն ,
 Աստ ամփոփեալ յետ իւր մահուան :
Ի վերայ սոցա սուրբ Խաչ շինեալ ,
 Կան այլ երկու մատրունք կազմեալ ,
 Առաքելոց մինն անուանեալ ,
 Սուրբ Համբարձման միւսըն կոչեալ :
Գոն արտաքոյ սուրբ Տաճարի
 Եօթըն սեղան յոյժ պանծալի ,
 Երկուքն 'ի մէջ գաւթին մեծի՝
 Սուրբ Նիկողեայ եւ Գէորգի :
Զորալն 'ի մէջ սուրբ Թորոսի ,
 Որ է յատուկ Եկեղեցի .
 Յինեալ ազնիւ եւ գովելի
 Զեռամբ Հեթում թագաւորի :

Եւ ՚ տանիս սոյն Տաճարի
 Գոյ եւ փոքրիկ այլ մատուռ մի ,
 Որ Հոգին Սուրբ նա անուանի ,
 Անախ սուրբ Լեառըն տեսանի :
 Աքա լիցին միշտ անխափան
 Մեզ օգնական եւ պահապան ,
 Որք թուեցան յայս երգարան
 Քըսան եւ հինգ ահա խորան :

ԵՐԳ ՔՍԱՆԵՒՄԻԵՐՈՐԴ

Դարձեալ գովեստ ՚ի վերայ սրբոյն Յակովիայ :

Ո՛վ սուրբ Յակովը ամենօրհնեալ ,
 Ոիրով Հոգւոյն դու առ լըցեալ ,
 Զի սուրբ անունդ է Հրոշակեալ
 Բոլոր յաշխարհըս տարածեալ :
 Ճեպեալ դիմեն վառեալ սիրով
 Ուխտաւորքըն անհուն ծովով ,
 Տիւ եւ գիշեր արտասուելով
 Ի յօգնութիւն զքեզ կոչելով :
 Զի որք սիրով առ քեզ դիմեն
 Եւ արտասուօք զկուրծս բաղխեն ,
 Փութով առնուն զոր ինչ խնդրեն
 Արեամբ ներկեալ քո սուրբ Գլխէն :

Արդ աղաքեմ բարեխօս լեր ,
 Մի գագարիր առ Հայր եւ Տէր ,
 Արտապէս օգնական լեր ,
 Ուխտաւորացն ընծայաբեր :
 Ուխտաւորքըն երբ գան ժաման ,
 Զիլիշտս բոլոր անդ մուանան ,
 Ի մէջ գաւթին ձեմեալ ցընծան ,
 Հոգւով հրձուեալ ուրախանան :
 Երանի տամ փափաքողաց ,
 Ուխտաւորաց այն եկողաց ,
 Զսուրբ Տեղիս համբուրողաց ,
 Նոցին ըզնորհս վայելողաց :

Ո՛վ ձանապարհ բարի Յիսուս ,
 Գուռովն կենաց մըտից Գրիստոս ,
 Որք ՚ի ծովու են կենցուղոյս
 Ըզքեզ ունին միայնուկ յօս :
 Տէրունական Ուխտաւորաց
 Ի սուրբ Տեղիս քո դիմողաց ,
 Միրով քոյին ըզմայլողաց
 Լեր ուղեկից յամեն դիմաց :
 Ըզհուր սիրոյդ յերկիր արկեր ,
 Գեղով սիրոյդ բորբոքեցեր .
 Ըզտեղիսըդ զոր ընտրեցեր ,
 Սուրբ կարօտոյդ մեզ գեղ ցուցեր :

Սուրբ Յակովը բաժակարբուն
Եւ Յակովը եղբօր քսին ,
Աղաշանօք Պետրոս վիմին
Ուխտաւորաց տուր հայցելին :
Գերեզմանի քո համբուրման ,
Գողգոթայի տեղւոդ զենման ,
Սուրբ Աթոռոյ երկնանըման
Զամենեսեան արա արժան :

ԵՐԳ ՔՍԱՆԵՒԵԽԵՐԿՈՒԽԵՐՈՐԴ

Դարձեալ ՚ի վերայ սրբոյն Յակովայ:

Ո՛վ իմ եղբարբ յականջ առէք զիմ զբան ,
Սուրբ Յակովը տաճարն է աննըման .
Սարսափելով մըտի ՚ի սուրբ Գերեզման ,
Լալով Շիրմին համբուրեցի ես ըզբարն :
Սուրբ Յարութիւն մեծ է եւ սուրբ Յակոբ դար ,
Սոզոմոնի Տաճարն անտի դարու վար ,
Ինքն ՚ի տեղ բարձր եւ բոլորն նորին սար .
Արիք տեսէք ըզբիրիստոսի սուրբ եղբայրն :
Ամիրայք եւ Պարոնք դուք ում ըսպասէք ,
Եկացք զվարն զբիրիստոսին դուք տեսէք .
Միոյն հազար տայ ձեզ՝ ընդէք անյոյս էք ,
Մեղ բարեխօս լինի Աստուածամայրըն :

Ի Գերեզմանն Աստուածածնի շատ լացի ,
Զաջըս մըտաց զգաստութեամք անդ բացի .
Ի Ղազարու գերեզմանըն գընացի ,
Անտի ելի ՚ի Համբարձման սուրբ լեառն :
Սուրբ Համբարձման լերին մի կողմըն գեղէ ,
Մեղաւորաց վրկիչ՝ ւախտից մեծ գեղէ .
Եկայք տեսէք մրպէս չքնաղ այն տեղէ ,
Զի սուրբ Սաղիմ գեղեցիկ Ուխտատեղէ :

ԵՐԳ ՔՍԱՆԵՒԵԽԵՐԵՔԵՐՈՐԴ

Ի վերայ վանուց սուրբ Հրեշտակապետի :

Դրութոտ տընկախիտ
՚ի մէջ քաղաքին ,
Սուրբ Հրեշտակապետ
նախկին բանտ Փլրկչին .
Աստ ներկայացաւ
՚ի դատ Անհային ,
Ուր եւ կապեցաւ
՚ի ծառ ձիթենին :
Հրեշտակը ահարեկ
նորին ձաղանաց ,
Կային սասանեալ
շուք եղեալ փառաց .

Անդանօր մի ոմն
յըսպասաւորաց ,
Տայր նըմա ապտակ
լինէր դիմադարձ :
Կուսանք սրբանուէր
կան ՚ի պաշտաման ,
Քաղաքացւոց այս
Տաճար սըրբազան .
Տեղի շընորհաց ,
մեղաց քաւարան ,
Մի միայն պարծանք
Ազգիս Արամեան :

ԵՐԳ ՔՍԱՆԵՒԶՈՐՐՈՐԴ

Ի վերայ վանուց սուրբ Փրկչին :

Երկրորդ բանտ Փրկչին
մերձ սուրբ Սիովնի ,
Կանխաւ տուն աստ լեալ
կայխափային .
Երկրոպագելի
փոշի սուրբ Երկրին ,
Ուր թուք եւ ապտակ
տուան իմ Փրսկչին :


Անդ հարցեալ Պետրոս
երիցս գայր յուրաստ ,
Հաւուն խօսելոյ
գայր անդրէն յիմաստ .
Յակնարկել Փրկչին
քան տայր նըմա ագդ ,
Յարեան արտասուաց
մըտանէր դարաստ :
Կանդնեալ ՚ի տեղւոջ
Տաճար սըրբազան .
Կափարիչ սուրբ Վէմն
կազմեալ անդ Սեղան .
Յերկրոպագութիւն
անդ հանդիսանան ,
Ազգաց եւ ազանց
ժողով Տէրունեան :

ԵՐԳ ՔՍԱՆԵՒԶԻՆԳԵՐՈՐԴ

Դարձեալ ՚ի վերայ սուրբ Փրկչայվանաց :

Միտ դէք ինձ որ գովեմ զԱմենափրկիչ ,
կենդանեաց մեռելոյ կեցուցիչ Փրկիչ ,
Ախտաժէտաց բըմիչկ , դիւաց հալածիչ ,
Ցիմարաց տըգիտաց ուսուցիչ Փրկիչ :

Ի Քրիստոսի Շիրմէն յայն վայրըն բերին,
 Ի ներքոյ խորանին զմեծ Վէմըն եղին,
 Զորս կողմն բաց թողին պատուական քարին .
 Պէսպէս մեղաց չարեաց ազատիչ Փրկիչ :
Ամենայն սուրբ Տեղին խորհրդական է ,
 Բոլորըն ամեն սուրբ Աղօթարան է ,
 Նորաշն սենեակըն յոյժ պատուական է .
 Դիւահարաց ախտից փարատիչ Փրկիչ :
Մի կողմն սուրբ Փրկչին՝ մեռելոց թաղէ .
 Միւս կողմն սուրբ Ախոն այլազգեաց տեղէ ,
 Եւ այլըն ձիթենեաց պարտէզ ու պաղէ ,
 Յոյս մեղաւորաց է , եւ քաւիչ Փրկիչ :



ԵՐԳ ՔՍԱՆԵԿԱՑԵՑԵՐՈՐԴ

ի վերայ սրբոյ Բերլեհնմի :

Վասն իմ մանկացեալ
 Փըրկչիդ բոլորից ,
 Սահմանք Եփրաթայ
 Ճագման քո ելից ,
 Ուր ծընար անախտ
 օտար մեր կըրից ,
 Ի բազուկ կուսին
 գըգուեալ գըրկալից :
Գեղ Աստուածորդւոյդ
 Ցըսուր անբանից ,
 Տայ նինջ քընաբեր
 ՚ի վերայ յարդից .

Եւ ջամբ խանդակաթ
կաթն ստեանց կուսից ,
Անկարօտ բնութեան
արդ մեղ համակից :

Ուր հովիւք եղեն
փառաբանակից ,
Երկնապար զուարթնոց
իջեալ ՚ի յերկնից ,
Որոց գունդագունդ
էջբ ՚ի յեթերից ,
Մարդկան նըշանակ
եղեն վերելից :

Փա՛ռք քեզ ՚ի բարձունս
հոգւով ցնծալից ,
Աստ մատուցանեմք
անմահ արքայիդ .
Որ ՚ի Նաղարէթ
փըթթեալ ծաղկալից ,
Աստ պըտղովք ՚ի լի
բուրես հոտ վարդից :

Եւ քեզ ընծայեմք
ընդ Մոգուց երից
Զերկըթպագութիւն
Արարչեդ բնաւից .
Առ ընկալ ՚ի մէնջ
ընդ կուսին անբիծ ,
Զաղերս մաղթանաց
տէրունեան ուխտից :



ԵՐԳ ԳՍԱՆԵԿԵՈԹԵՐՈՐԴ

Առ սրբամաքուր տապան Աստուածածին :

Ամենօրհնեալ Մարիամ
Մայր Տեառն իմոյ տիրածին ,
Հասարակաց նընջեաց քուն
՚ի լւառըն սուրբ Սիոնին :
Ուր Միածին Բանն Աստուած
Հըրեշտակօք լուսարփին ,
Գայ իջանէ յաւանդումն
Հոգւոյն յերկրէ ՚ի յերկին :

Համագումար ՚ի ծագաց
 Սուրբ Առաքեալը ՚ի տեղին,
 Համակին անդ սուրբ կրիւք
 Մեծ տրտմութեան եւ խընդին:
Լուսապատար ջահազգեաց
 Եւ սուրբ կուսանք ընդ նոսին,
 Բարձեալ զդագաղ Տիրամօր
 Գէթսեմանեան տան շիրմին:
Ոթեալ եղեւ անդանօր
 Յերիս շրջան արեգին,
 Բարթողիմեայ յետագայ
 Բանի տապանն տարփագին:
Տեսին ունայն ըզտեղին
 Եւ գերեզման առանձին,
 Քաջ նմանեալ իւր Որդւոյն
 Յարուցելց Միածնին:
Ընդ ամպաճեմն սաւառնի,
 Ընդ օդ թեթեւ վերնային,
 Գունդե անմահից զուարթնոց
 Ցողջոյն խառնին սուրբ կուսին:
Գերակայից բարձրացեալ
 Յեթերս ՚ի վեր սէրարփին,
 Բարեբանի օրհնութեամբ
 Մաքուր Տաճար Անեղին:
Մաղթեմք ՚ի ձօն օրհնութեան
 Քեզ, Տիրուհւոյդ մօր Բանին,
 Հայեաց ՚ի մեզ ՚ի բարձանց
 Ցայս մեր ժողով սուրբ Ուխտին:

Ուր յերկրաքարչ աստ սահիմք
 Համատագնապք ՚ի վըշտին .
 Յերկնաշու քյ պողոտայն
 Մի սոք մեր անդ գթեսցին:

ԵՐԳ ՔՍԱՆԵԿՈՒԹԵՐՈՐԴ

Ի վերայ լերին սրբոյ Համբարձման:

Ի լուսալ տասնեակ քառից
 Աւուրց սրբյ Յարութեան,
 Ել Տէրն ՚ի լեառն Զիթենեաց
 Առաքելովք սրբազն:

Ուր զառաջին եւ ըզվերջին
 Հրամանաց իւր տայր պատուէր,
 Թագւառորաց եւ աշխարհի
 Առնէր զնոսա քաջալեր:

Միով հոգւովլ յոսկիաձոյլ
 Յօդէ յանլոյծ ՚ի շղթայ .
 Ի Սաղիմեան նստեալ գագար
 Յերկնից զՀոգին խոստանայ:

Ամպախաղաց վերասլանայ
 Ընդ օդ թեթեւ լուսազգեաց,
 Որով գրանդիք երկնից բացան
 Վերելս մարդկան տալ յԱստուած:
Ուր զուարթնոց իջեալ յերկնից
 Առաքելոց տան խրախոյս,

Դյոն օրինակ իջանելոյն
 կանխաւ լինին քաջայոյս :
Հաւատացեալք անդ խաչակրօն
 կուսով փայլին վառ ՚ի վառ,
 Մեղսասիրաց անհաւատից
 Լիցի դատիլ անաշառ :
Արդ խոնարհեալ յայս սուրբ լերին
 Աստուածորդւոյդ Համբարձման,
 Մաղթեմք յերկնից զամենազօր
 ԶՀոգիդ սուրբ տալ մեղ օճան :
Յանկից վերաց քոց հնգեցունց
 Մեզ կեանք ծաւալ ցոլասցին,
 Յաւերժական լուսով փառաց
 Ցաշեան քո կալ ՚ի դասին :

ԵՐԳ ՔՍԱՆՆԵԽԻՒՆՆԵՐՈՐԴ
 Ի վերայ Տնօրինուրեան Քրիստոսի :

Տէրըդ սիրով խոնարհեցար,
 Ցարդանդ կուսին բնակեցար,
 ԶԱԴամային մարմին զգեցար,
 Եւ աշխարհի լոյս ծագեցար :
Ի յանարատ կուսէն ծընար,
 Ի խանձարուրս պատեցար,
 Ի յանբանից Մսուր եդար,
 Եւ ՚ի Մոգուցըն պատուեցար :

Քառասնօրեայ ընծայեցար
 Ըստ օրինաց դու ՚ի Տաճար,
 Փակեալ դրան բացող ցուցար,
 Ի Ծերունոյն անդ գգուեցար :
Ի Յորդանան մկրտեցար,
 ՑԱստուած Հօրէդ վկայեցար,
 Ի Յովշաննէ քարոզեցար,
 Գառն Աստուծոյ անուանեցար :
Ի Վերնատունն բազմեալ եղեր,
 Զահեղ խորհուրդն աւանդեցեր,
 Զաշակերտացդ զոտս լուացեր,
 Խոնարհութեան վարս ուսուցեր :
Ի Յուդայէ համբուրեցար,
 Ի ծառայէ ապտակեցար,
 Ի չար Հրէից նախատեցար,
 Կամաւ ՚ի Խաչ դու բարձրացար :
Ընդ անօրէնս համարեցար,
 Արբեր լեղի եւ դառնացար,
 Ուր կենդանիդ անշնչացար,
 Սուր գեղարդեամբըն խոցեցար :
Ի Յովսեփայ դու պատեցար,
 Ի Գերեզման կոյս թաղեցար,
 Եւ մատանեաւ անդ կնքեցար,
 Ի զինուրաց պահպանեցար :
Ի գժոխս իջեալ աւերեցեր,
 ԶԱԴամ զծնողն ազատեցեր,
 Զարբայութեան դուռըն բացեր,
 Եւ մեղ ձրի պարգեւեցեր :


Ի սուրբ Շիրմէն փառօք յարեար,
 Բազմաց յայտնի երեւեցար,
 Ընդ աշակերտսըն բազմեցար,
 Յորժամ փակեալ դրօք ցուցար:
Ի Գալիլեա ապա գնացեր,
 Անդ զԱռաքեալսըն օրհնեցեր,
 Ի հեթանոսս առաքեցեր,
 Եւ բարողել պատուիրեցեր:
Յերուսաղէմ կալ ասացեր,
 ԶԱՄՍՈՒԱՃ հոգին աւանդեցեր,
 Նովաւ լեզուս բաժանեցեր,
 Եւ շնորհօք զարդարեցեր:
Ի Զիթենեաց լերին գտար,
 Յորմէ փառօք վեր համբարձար,
 Դասուց վերնոց ահեղ ցուցար,
 Եւ ընդ աջմէ Հօր բազմեցար:
ՈՎ տէր Յիսուս ԱՄՍՈՒԱՃ եւ բան,
 Կրեցեր կամաւ զայս ամենայն,
 Շնորհիւ քո սուրբ Տնօրէնութեան,
 Արժանացն քոյդ տեսութեան:

ԵՐԳ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ Յարութեան Քրիստոսի:

Գոհութիւն մեծ տեառն Արարչին
 Եւ Քրիստոսի հանուրց Փրկչին,
 Որ ՚ի ձեռըն իւրոյ Խաչին
 Յարոց ընդ իւր զմարդն առաջին:

Այսօր յարեառ ՚ի մեռելոց,
 Լոյս ծագեցաւ արարածոց,
 Զհոգիս փրկեաց ՚ի գժոխոց.
 Աւետիս տամ ազգիս Հայոց:
Լուսաւորեաց զոգիս մարդկան,
 Սուրբ Յարութեամբն պատուական,
 Զմարմինն ետ մեղ անապական,
 Եւ սուրբ զարիւն իւր փրկական:
Ուրախութեամբ Ճաշակեսցուք,
 Եւ սրբութեամբ հազորդեսցուք,
 Զի ՚ի մեղաց սրբեալ լիցուք,
 Յանմահութիւն փոխարկեսցուք:
Իիւսեալ ՚ի մի փառատրեսցուք,
 Հզյարուցեալըն գովեսցուք.
 Զլոյս Գերեզմանն համբուրեսցուք,
 Եւ զՅարութիւնըն պատուեսցուք:
Սուրբ քաղաքըն Երուսաղէմ,
 Ընդ որ եւ սուրբըն Բեթլեհէմ,
 Որք հաւատոյս մեր եղեն վէմ,
 Մարտկոց ամուր գիւաց ընդդէմ:
Տիրամօր սուրբ ԱՄՍՈՒԱՃՆին
 Ուրախութիւն ետ իւր Որդին,
 Եւ որք այսօր սգւ ւորին,
 Սադայելի դասուն կարգին:



ԵՐԳ ԵՐԵՍՆԵՒԻՄԻԵՐՈՐԴ
ի վերայ սրբոյ Կարապետին :

Կանանցածին չէ յարուցեալ
Մեծ քան ըղբեզ այր զօրացեալ,
ի Տեառնէ է այս ծանուցեալ,
Խնդրակատար սուրբ Կարապետ :
Գայր Կյան առ մայր քո յդացեալ,
Դու յարգանդին զայն իմացեալ,
Երկիր պագեր անդ խաղացեալ,
Բանին սատար սուրբ Կարապետ :
Զաքարիա հայր համբացեալ,
Ի քում ծննդեան բերան բացեալ,
Զանունդ Յովհաննէս կարդացեալ,
Շնորհապատար սուրբ Կարապետ :

Ընդ մէջ կապեալ մաշկեայ գօտի
Բնակեցար յանապատի ,
Եւ Հրեշտակաց գու հաւաստի՝
Նմանեցար սուրբ Կարապետ :
Դու արուսեակ ծագման Արփւցն ,
Ընդունարան շնորհաց Հոգւցն ,
Որ Մկրտիչ Աստուածորդւցն
Ընտրեալ գտար սուրբ Կարապետ :
Զեռամբդ առեալ ըզջուր գետոյն
Լցեր վերայ օրհնեալ Գլխոյն ,
Եւ ձայնի Հօր վկայելոյն
Արժանացար սուրբ Կարապետ :
Զայն բարբառոյ մականուանեալ ,
Ճշմարտութեան միշտ հաւանեալ ,
Ըզէրովդէս յանդիմանեալ ,
Գլխատեցար սուրբ Կարապետ :
Ի Դժոխսըն քարոզեցեր ,
Տեառն ըզգալուսոտ աւետեցեր ,
Որով զտրտմեալս բերկրեցուցեր ,
Ուրախարար սուրբ Կարապետ :
Գովելի ես դու զանազան ,
Կենաց մերոց ես գաւազան ,
Քրիստոնէից լեր աւազան ,
Ո՛վ սրբարար սուրբ Կարապետ :
Առաքելոց , Մարգարէից ,
Մարտիրոսաց , Քահանայից ,
Ճգնաւորաց սրբոց հանրից
Մեծ կոչեցար սուրբ Կարապետ :

Վիո աղօթքն է ընդունական ,
Բարեխօսեան վասըն մարդկան ,
Որ անուանիս “Մշու Սուլդան” ,
Հոգեպարար սուրբ Կարապետ :



ԵՐԳ ԵՐԵՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Գովասանուրիւն ՚ի վերայ բարեկամին ՚իրիստոսի
սրբոյն Ղազարու :

Իսկզբանէ Բանն Աստուծոյ
Եղեւ մարմին՝ առ փրկելոյ
Ըցհողածին բնութիւն մարդոյ ,
Եւ ՚ի մեղաց ազատելոյ :

Ղամբար լուսոյ արդարութեան ,
Ղազար քարոզ ճշմարտութեան ,
Որ ցուցար մեզ դուռն յարութեան ,
Եւ ճանապարհ արքայութեան :
Արի՛ Ղազար իմ սիրական ,
Ե՛կ մի մնար ՚ի գերեզման ,
Տէրըն կոչեաց եւ զքեզ հան
՚ի գժոխոցն անդնդական :
Զուարթնոց նման աղնիւ Ղազար ,
Սուրբ եւ անմեղ մաքուր արդար ,
Ղզձայն լուար ըզկենարար ,
Զորեքօրեայ մեռեալդ յարեար :
